ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4353-Ա « 27 » դեկտեմբերի 2023 թ.

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարանի և «Ֆոտոն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 03.05.2023 թվականին կնքված «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/89-1» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարել Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքները: Ընկերությունը, խախտելով պայմանագրի սահմանված պարտավորությունները, մասնակի է մատակարարել 03.05.2023 թվականին կնքված «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/89-1» ծածկագրով պայմանագրի 1-ին և 2-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքները:

Երևանի քաղաքապետարանը, հիմք ընդունելով պայմանագրի 2.1.3 կետի ա) ենթակետը, 23.11.2023թ., 01.12.2023թ., 15.12.2023թ. էլեկտրոնային փոստով, ինչպես նաև հեռախոսակապի միջոցով դիմել է Ընկերությանը, 23.11.2023 թվականի ծանուցմամբ տվել է ողջամիտ ժամկետ մինչև 01.12.2023 թվականը, 01.12.2023 թվականի ծանուցմամբ՝ մինչև 07.12.2023 թվականը՝ տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքները մատակարարելու պահանջով, ինչն Ընկերության կողմից չի կատարվել: 15.12.2023 թվականի ծանուցմամբ Ընկերությանը տեղեկացվել է՝ պայմանագրային պարտավորությունները չկատարելու հիմքով համապատասխան իրավական կարգավորումների կիրառման վերաբերյալ:

Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև Պայմանագրի 2.1.7.1. կետի բ) ենթակետի պահանջով՝ միակողմանի մասնակի լուծել է 03.05.2023 թվականին կնքված «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/89-1» ծածկագրով պայմանագիրը՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով:

03.05.2023 թվականին կնքված «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/89-1» ծածկագրով պայմանագրի լուծման վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է տեղեկագրում սույն թվականի դեկտեմբերի 18-ին և Պայմանագիրը դեկտեմբերի 19-ի դրությամբ համարվում է լուծված:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով.

1. «Ֆոտոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետի վրա:

3. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ